ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2001 թ.Վանաձոր, Տիգրան Մեծի 22
E-mail: vanadzor.lori@mta.gov.am
info@vanadzor.am

Հեռ. 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

079 N5438 «22» 10 2014թ. Ձեր N. Ե/2014-06.10/397 առ « 06 » 10 2014թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Քաղաքի տոնին նվիրված համաքաղաքային տոնախմբության ծրագիրը կազմվել է Վանաձորի քաղաքապետարանի մշակույթի և կրթության բաժնում: Այն իր մեջ ներառել է բազմաբնույթ միջոցառումներ, որոնք սկսվել էին սեպտեմբերի 17-ից և շարունակվել մինչև հոկտեմբերի 7-ը:

Հոկտեմբերի 4-ին Վանաձորի Հայքի հրապարակում նախատեսված միջոցառման հանդիսավոր մասն սկսվել է 50 րոպե տևողությամբ գրական-գեղարվեստական կոմպոզիցիայով, որին մասնակցել են քաղաքի գրեթե բոլոր պարային համույթները և որտեղ մասսայական պարային տեսարաններով, երաժշտության, խոսքի և քաղաքի պատմության տարբեր ժամանակներին բնորոշ դետալների միջոցով կատարվել է պատմական էքսկուրս «Ղարաքիլիսա-Կիրովական-Վանաձոր» սխեմայով:

Հրապարակում «Я, ты, он, она...» երգի հնչյունների ներքո պարային համարի կատարումն ու պիոներների անցումը խորհրդանշում էր վերոհիշյալ սխեմայի «Կիրովական» ժամանակահատվածը և ընդամենը հանրակրթական դպրոցների աշակերտների մասնակցությունն էր քաղաքի տոնին: Դա կատարվել է իրենց հագուստներով և հնից պահպանված վզկապներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կատ.՝Գ.Բաղյան
հեռ. 2-00-53